

ԱՊՐԻԼ Գրատուն **ABRIL** Bookstore
&
ՌՈՍԼԻՆ Արտեստասրահ **ROSLIN** Art Gallery
կը ներկայացնեն *present*

2016

The
Art գործուն
of
D i a s p o r a
քննադատական

AUGUST 6 – 21 ՕԳՈՍՏՈՍ
415 E. Broadway, Glendale, CA

Նուիրումս արեղծագործանիտան *Featuring the work of*

ԴՐ. ՄԱՐԿ ՆՇԱՆԻԱՆ **DR. MARC NICHANIAN**
Հեղինակ և հայագիտական դասախոս *Author and Professor of Armenian Studies*

ՀՐԱՅՐ ԱՆՄԱՀՈՒՆԻ **HRAYR ANMAHOUNI**
Սարքատրամնիտս արունստագէտ *Installation Artist and Filmmaker*
ու ֆիլմարկատորի:

The Art of Diaspora / Քննադատական Գործոն

ցուցադրության, բանախօսություններու եւ մասնագիտական խմբակներու տարեկան կազմակերպումը շարք մըն է, մեծամասամբ՝ հայերէնով, քննարկելու ժամանակակից սփիւռքեան եւ հայկական արուեստիչ քննադատութեան ու իմացական մտածողութեան վիճակը: Նպատակն է նպաստել հայերէնով քննադատական խօսքի արտադրութեան: Ներկայիս, Սփիւռքը հազուադէպօրէն հայերէն լեզուով քաղաքական, ընկերային, եւ գեղարուեստական քննադատութիւն կը մշակէ: Այս կացութիւնը մշակութային լճացում եւ մոռացկոտութիւն պատճառած է: *The Art of Diaspora / Քննադատական Գործոնը* ոչ միայն կը նպատակադրէ Սփիւռքի գեղարուեստական արտադրութիւնը վերաքննարկել, այլ նաեւ ճամբայ հարթել աւելի իմաստալից երկխօսութիւններ ստեղծելու Սփիւռքի բազմազան մշակոյթներու եւ հաստատութեանց հետ: Ենթադրելով որ այս միջոցառումները ունկնդիրներուն պիտի ներշնչեն, *Փոխգործոն Հրատարակը* կը հրաւիրէ ներկաներուն իրենց տպաւորութիւնները ներկայացնել ստեղծագործական կամ քննադատական արտայայտութեամբ:

Օր **1** Շաբաթ, ՕԳՈՍՏՈՍ 6 / Կ.Ե. 7-10

ՅՈՒՑԱՅԱՆԴԵՍԻ ԲԱՅՈՒՄ ԵՒ ԲԱՐԻԳԱԼՈՒՄ ^(Ե)

Օր **2** Զորեքշաբթի, ՕԳՈՍՏՈՍ 10 / Կ.Ե. 7:30

ՀՐԱՅՐ ԱՆՄԱՀՈՒՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ^(Ե)

Օր **3** Ուրբաթ, ՕԳՈՍՏՈՍ 12 / Կ.Ե. 7:30

ՎԵՐԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՍ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻՆ ^(Հ)

Օր **4** Կիրակի, ՕԳՈՍՏՈՍ 14 / Կ.Ե. 5

ԴՐ. ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ^(Հ)

Օր **5** Հինգշաբթի, ՕԳՈՍՏՈՍ 18 / Կ.Ե. 7:30

ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒՈՎ ԱՄՓՈՓՈՒՄ ^(Ա)

Օր **6** Կիրակի, ՕԳՈՍՏՈՍ 21 / Կ.Ե. 5

ՓՈՆԿՈՐԾՈՆ ՀՐԱՊԱՐԱԿ ^(Ե)

Ներկայացման լեզու ^(Հ) Հայերէն ^(Ե) Երկլեզու ^(Ա) Անգլերէն

The Art of Diaspora / Քննադատական Գործոն

(critical factor) is an annually organized series of exhibitions, lectures and panels, mostly in Armenian, discussing the state of contemporary Diasporan and Armenian art, criticism and intellectual thought. The goal is to facilitate the production of critical discourse in the Armenian language. The Armenian Diaspora relies less and less on using Armenian in social and artistic discourses, especially when it involves critical thinking. This situation has led to cultural stagnation and amnesia. *The Art of Diaspora / Քննադատական Գործոն* proposes not only to re-engage with Armenian Diasporic cultural production, but also hopes to pave the way to engage more deeply and meaningfully with different cultures and institutions. Attendees of the event will be asked to participate by selecting works and/or topics that are of interest to them and will have the opportunity to present their critical or artistic responses during the *Interactive Forum*.

DAY **1** Saturday, **AUGUST 6** @ 7-10pm

OPENING RECEPTION OF ART EXHIBIT ^(Ե)

DAY **2** Wednesday, **AUGUST 10** @ 7:30pm

THE WORK OF HRAYR ANMAHOUNI ^(Ե)

DAY **3** Friday, **AUGUST 12** @ 7:30pm

REVISITING THE REVIEW GAM ^(Ա)

DAY **4** Sunday, **AUGUST 14** @ 5pm

THE WORK OF DR. MARC NICHANIAN ^(Ա)

DAY **5** Thursday, **AUGUST 18** @ 7:30pm

ENGLISH LANGUAGE DISCUSSION ^(Ե)

DAY **6** Sunday, **AUGUST 21** @ 5pm


INTERACTIVE FORUM & CLOSING RECEPTION ^(Ե)

Language of presentation ^(Ա) Armenian ^(Ե) Bilingual ^(Ե) English

► *On Deep Background*

- Հրայր Անմահունիի արուեստը



On Deep Background խորագիրը, փոխառնում լրատուական ասպարեզեն, կ'ակնարկէ հասկացողութեան մը, համաձայնութեան մը՝ պայմանի մը պաշտօնական էոյթի մը եւ լրագրողի մը միջեւ՝ թէ ոչ միայն յայտնուած տեղեկութիւնը չի կրնար աղբիւրին վերագրուիլ, այլ ուղղակի շրջանառութեան չի կրնար դրուիլ: Այս տեսակի համաձայնութեան մը պայմանները հիմն են ցուցահանդէսի մը հարցադրումին՝ ներկայացումի, ենթակայականութեան, լեզուի, թարգմանութեան, ինքնութեան եւ պատմութեան՝ իբրեւ կառոյցներ բնոյթին մասին: Հրայր Անմահունի Էօլմեսեքեանի գործը կը պեղէ եւ կը բացայայտէ խորապատկերի իսմացութիւնը՝ իր քանի մը իմաստներով, տարբեր թեմաներով եւ յետ-գիտակարգային (post-disciplinary) ֆիլմի, տեսերիզի, մետաքսամադի, լուսապատկերի, նկարի եւ սարքաւորումի նման յաճախ վաղանցիկ միջոցներով: Ցուցադրութիւնը կը բաղկանայ գործերէ որոնց մասին խօսուած է Փրոֆ. Մարկ Նշանեանի հետ հարցազրոյցին *ԿԱՄ* պարբերական ճին մէջ, բայց միասին հրապարակայնօրէն բնաւ չ'են տեսնուած:



► *On Deep Background*

- *The art of Hrayr Anmahouni*

On Deep Background, a title borrowed from journalistic practices, refers to an understanding, agreement, and condition, between an official entity and a reporter: not only that the divulged information cannot be attributed to its source, but that it cannot even be directly paraphrased. The terms of such an agreement serve as the basis for this exhibition's interrogation of the nature of representation, subjectivity, language, translation, identity and history as constructs. Hrayr Anmahouni's work explores and exposes the concept of background, along with its many meanings, in a variety of subjects and post disciplinary, often ephemeral media that are as varied as film, video, silkscreen, photography, painting, and installation. The exhibition consists of works discussed in the interview with Professor Marc Nichanian in *GAM Review 6*, but never seen together in public.



- ▶ *Cool Breeze* և (translated) *Tebi Gyank*
 - Շարժասարկերներու ցուցադրում
- ▶ *Solemnity* Սարքաւորում (Art Installation)
 - Արուեստագէտի խօսք և վերլուծում Դր. Միրնա Տուզճեանի

Cool Breeze


Ճորճ Քուչարի *Summer of No Return*ի վերջնահաւաքին սկսաւ ասիկա, երբ անգործ նստած էլեկտրական հովահար մը և քանի մը մոմեր գտայ: Հետաքրքրութիւնս սրեց: Սարքաւորումը ցուցադրելու ատեն երկու ամգամ կրակ առաւ: Ուստի խորհեցայ որ տեսերիզի ապահովութեան պէտք է ապախինիմ:

(translated) *Tebi Gyank*

Հաղորդամիջոցներու մէջ շերտաւորումի բարդ աշխատանք մը, այս գործը տեսողական պատկերներու «կը բարգմանէ» Յովհաննէս Սալիպեանի ձայնային արուեստի մէկ կտորը որ ինքնին հիմնուած է Վահէ Օշականի մէկ բանաստեղծութեան վրայ, գոր Օշական ինք կարդացած է:

Solemnity

Պատի ձայն քանդակ մը տեսերիզի ելուստներով Հրայր Անմահումի Էօլ-մեսեքեանի և Անահիտ Գասապեանի կողմէ առաջին անգամ ներկայացուած Pratt Manhattan արուեստասրահին մէջ 2010ին: Այս լատեսողական սարքաւորումը խաչածետող և կցկտուր պատումներ կը պատկերէ բացատրելու համար ցեղասպանութիւնը ներկայացնելու մէջ բարոյական երկսայրաբանութիւնը: Չայս ընելով, անհկա յտակօրէն կ'արտայայտէ աւանդական փաստագրական ժանրին մէջ միջամտութիւնները և պատմութիւնը հարազատօրէն ներկայացնելու իր յաւակնութիւնները:



- ▶ *Cool Breeze and (translated) Tebi Gyank*
 - Two films by Hrayr Anmahouni
- ▶ *Solemnity: An Art Installation*
 - Artist talk followed by conversation with Dr. Myrna Douzjian

Cool Breeze


It is the life and tribulations of a candle behind the wind. It started at George Kuchar's *Summer of No Return* wrap up party, when I came upon an idly sitting electric fan and few candles. Curiosity got the best of me. Twice when exhibited the installation caught on fire. So I felt it should end up in the safety of a video documentary.

(translated) *Tebi Gyank*

A complex study in layering and in media forms, this work "translates" into visual images a piece of sound art by Ovannes Salibian, which is itself based on a poem by Vahe Oshagan, read by Oshagan himself.

Solemnity

A wall sound sculpture with video projection by Hrayr Anmahouni Eulmessekian with Anahid Kassabian, was first introduced at the Pratt Manhattan Gallery in 2010. This audio-visual installation portrays intersecting and fragmented narratives in order to theorize the ethical dilemmas in representing genocide. In doing so, it articulates interventions in traditional approaches to the documentary genre and its claims to representing history authentically.



► **Պատկեր 1**

• Բանասխուտիսն Դր. Մարկ Նշանեանի

► **ԿԱՄ պարբերաթերթի ներուժին և բացառիկ դերին՝ քննական քննարկումի խթանման գործով**

• Ներկայացում Կարեն Չալաքեանի

► **Ինչո՞ւ (Ոչ) վերլուծում**

• Խմբային քննարկում Հրայր Անմահունիի և Դր. Մարկ Նշանեանի հետ վարիչ՝ Կարեն Չալաքեանի

ԿԱՄ պարբերականը հայալեզու վերլուծական պարբերաթերթ մըն է՝ նուիրում գրականութեան, քննադատութեան և բարգձանութեան: Սփիւռքահայերը ջանք չեն զանար արտայայտելու իրենց նուիրումը հայ արուեստի, պատմութեան և մշակոյթի տարբերակներուն և երեսակներուն: Ի հեճուկս, ուրիշներ զանոնք քննադատել չեն դադիր: Բայց Սփիւռքի հսկայ և այլազան ցանցին մէջ քիչ տարածութիւններ կան ուր բերքային և պատմական մեկնաբանութիւնները անդին անոր պայմաններուն տակ ապրիլը լուրջ քննարկումի ենթարկուած է և խորապէս վերլուծուած, մասնատրաբար՝ հայերէն լեզուով, համաբայլ ժամանակակից գեղարուեստական ու փիլիսոփայական շարժումներու: Այս պարապն է որ ԿԱՄը կը լեցնէ անցեալ երեք տասնամեակներունջ 1980ի իր առաջին հրատարակութենէն ի վեր: Գրական, փիլիսոփայական և բարգձանական դիտանկիւններէ, ԿԱՄը ուղղակիօրէն կամ անուղղակի ներկայացուցած, վերլուծած և բացատրած է հայ Սփիւռքը իր գերակայող բարբառով՝ արեւմտահայերէնով: Յատկապէս ինչպէ՞ս և ի՞նչ յոյսերով: Ի միջի այլոց, այս հարցերն են որ կը յուսանք քննարկել ԿԱՄի ետին խթանիչ ուժին՝ փիլիսոփայ և գրող Դր. Մարկ Նշանեանին հետ, ինչպէս և արուեստագէտ ու շարժանկարիչ Հրայր Անմահունիի, որ՝ աշխատակցած է ԿԱՄին: ԿԱՄի վերջին երկու թիւերը 5 և 6 (լոյս տեսած համապատասխանաբար 2002ին և 2005ին), ԱՊՐԻԼ Հրատարակչատան կողմէ լոյս ընծայուած ենիս անոնք տրամադրելի են և մեր խօսակցութեան կիզակէտը պիտի ըլլան:

► **The Image 1**

• Lecture by Dr. Marc Nichanian


► **The Singular Role of the review GAM in Fostering Critical Discourse in the Diaspora**

• Talk by Karen Jallatyan

► **Why (Not) Analysis?**

• Panel discussion with Dr. Marc Nichanian and Hrayr Anmahouni facilitated by Karen Jallatyan

GAM Review is an Armenian language analytical journal dedicated to literature, criticism and translation. Diaspora Armenians spare no effort in expressing their devotion to and pride regarding versions and aspects of Armenian arts, history and culture. Some, by contrast, spare no criticism to them. Yet, in the vast and varied network of the Diaspora, there are few spaces where living under its conditions is seriously reflected upon and profoundly analyzed beyond journalistic and historical accounts, especially in the idiom of the Armenian language, in tandem with contemporary artistic and philosophical movements. This is the gap that GAM has been filling in the last three decades, since its first publication in 1980. From literary, philosophical and translational vantage points, GAM has directly and indirectly showcased, analyzed, and theorized the Armenian Diaspora in its dominant idiom - Western Armenian. Particularly how and with what hopes? These, among others, are the questions that we are hoping to discuss with the driving force behind GAM, philosopher and author Dr. Marc Nichanian, as well as with artist and filmmaker Hrayr Anmahouni, who has contributed to GAM. The last two issues of GAM, numbers 5 and 6 (appearing in 2002 and 2005, respectively), have been published by Abril Press; they are available in Abril Bookstore and will be at the focus of our conversation.



► **Պարկերը 2**

- Բանախօսութիւն Դր. Մարկ Նշանեանի ներկայացնելով նորագոյն գիրքը՝ «Պարկեր, պատում, պատմութիւն»

► **Դր. Նշանեանի փիլիսոփայութիւնը եւ անոր անդրադարձը**

- Խմբային քննարկում Դր. Մարկ Նշանեանի, Դր. Թալար Շահինեանի, Դր. Միրնա Տուգնեանի եւ Կարէն Զալլաթեանի հետ



Պարկեր, պատում, պատմութիւն հատորը ներառում է սփիւռքահայ փիլիսոփայ Մարկ Նշանեանի ուսումնասիրութիւնները լուսանկարչուհի Կարոլ Ֆէկէտէի լուսանկարների ինչպէս նաեւ 20րդ դարի Ֆրանսիացի մտաւորականներ՝ Մորիս Բլանշոյի եւ Ժորժ Բատայի գրական եւ փիլիսոփայական գործերի մասին: Դիտարկում են պատկերի, պատումի եւ պատմութեան հարցերը ժամանակակից մտքի կոնտեքստում: Յաւելուածով ներկայացում են նաեւ Ֆէկէտէի լուսանկարներն ու հատորի հեղինակի կողմից յիշեալ գրողների գործերից բարգմանուած հատուածներ: Հատորը եզրափակում է օգտագործուած Ֆրանսերէն փիլիսոփայական եզրերի հակիրճ բառարան:

Դր. Մարկ Նշանեանի մտածումը ուշադիր փիլիսոփայական զննումի ենթարկած է պատմութիւնը եւ գրականութիւնը գործածելու եւ հասկնալու արեւմտեան շնորհուած ենթադրութիւններն ու սովորոյթը, ինչպէս եւ անցեալի վերակառուցումը՝ ցեղասպանական աղէտի մը փիլիսոփայական ուսումնասիրութեան եւ ապացուցման ու վկայաբանութեան միջոցաւ: Դր. Նշանեան չէ խուսափած այս հարցերուն մասին մեր արմատացած ենթադրութիւնները հարցաքննել, համագիր ընտրելով այն կերպը որով հայ գրականութիւնն ու միտքը, ինչպէս եւ համաշխարհային հայ իրականութիւնը կ'առընչուին անոնց հետ: Չայս ընելով, Դր. Նշանեան դիտարկած է եւ ընդլայնած խոհերը բացառիկ մտածողներու ինչպէս Ռուբըր Պեննըմին, Յակոբ Օշական եւ Ժաք Տերիտա: Այս բանախօսութիւնը պիտի քննէ այն գորատը կլանումը որ պատկերները ունին մեր երեւակայութեան, վկայելու փափաքին, պատմութիւն գրելուն եւ գրականութիւն արտադրելուն վրայ: Ի՞նչ է պատկեր մը: Ի՞նչի՞ համար կը գործածենք պատկերները: Ի՞նչո՞ւ կը նախընտրենք շնորհել այն կլանումին մասին որ պատկերները ունին մեր վրայ:

► **The Image 2**

- Lecture by Dr. Marc Nishanian presenting his latest book *Պարկեր, պատում, պատմութիւն (Image, Story, History)*

► **The Implications of Dr. Marc Nishanian's Thought**

- Panel discussion with Dr. Marc Nishanian, Dr. Talar Chahinian, Dr. Myrna Douzjian and Karen Jallatyan

Պարկեր, պատում, պատմութիւն (Image, Story, History) This volume includes diaspora Armenian philosopher Marc Nishanian's reflections on the works of the photographer Carole Fékété, as well as 20th-century French intellectuals Maurice Blanchot and Georges Bataille's literary and philosophical works. The questions of images, story and history are treated within the context of contemporary thought. As an addendum are also presented photographs by Fékété and excerpts from the mentioned authors' works translated by the author. The volume ends with a short dictionary of French philosophical terms used in it.

Dr. Marc Nishanian's thought has subjected to careful philosophical scrutiny unreflected assumptions and practices that lie at the core of the Western sense and use of history and literature, as well as reconstructing the past through philological research and witnessing and testifying to a genocidal catastrophe. Dr. Nishanian has not shied away from questioning our deeply-rooted assumptions about these matters choosing as its context the way Armenian literature and thought, as well as the global Armenian community, has related to them. Doing so, Dr. Nishanian has commented upon and extended the thought of exceptional thinkers and writers such as Walter Benjamin, Hagop Oshagan and Jacques Derrida. The present lecture will address the powerful grip that images have on our imagination, desire to witness, write history and make literature. What is an image? To what use do we put images? Why do we prefer not to reflect on the grip that images have upon us?

- ▶ Անգլերենով ներկայացում եւ քննարկում Հրայր Անմահունիի եւ Մարկ Նշանեանի գործերուն, ընդ որում՝ *Mourning Philology* հասարակին
- ▶ Ծրագրի նախկին բաժիններու վերանայում անգլերենով


*Mourning Philology*ը կը հենի Վարուժանի եւ իր գործին վրայ՝ ներկայացնելու ազգային երեսակայութեան պատմութիւնը, որ նաեւ ազգային բանասիրութեան պատմութիւնն է, որպէս հակազդեցութիւն տասնըիններորդ դարու գլխաւոր երկու բանասիրական հնարքներու՝ առասպելական կրօնն ու բնիկը: Իր առաջին բաժնին մէջ գիրքը աշակիտով կը պատմէ արեւելագիտական բանասիրութեան յաջորդական փուլերուն մասին: Ազգային յայտնումի պատմութեան վերջին դրուագը 1914ին Պոլիս տեղի ունեցաւ, երբ Մեհեան գրական հանդէսը Վարուժանի շուրջ խմբեց սփիւռքի հայ գրականութեան մեծ անունները:

«Հեթանոս կեանքը զիս աւելի կը դիտէ ամէն մէկ անցնող օր: Եթէ կարելի ըլլար այսօր, կրօնքս կը փոխէի եւ ուրախութեամբ կ'ընդունէի բանաստեղծական հեթանոսութիւնը», կը գրէր բանաստեղծ Դանիէլ Վարուժան 1908ին: Իր կեանքին մնացած եօթը տարիներուն ան գլխաւորաբար այս «հեթանոս» հակումով գրեց: Եթէ գեղարուեստական փորձ մըն էր, ուրեմն ինչո՞ւ արուեստը պէտք է սահմանուի կրօնքի առընչութեամբ: Եւ՝ որոշակի ո՞ր կրօնքին: Վարուժան Շելլինգի Արուեստի Փիլիսոփայութեան՞ կ'արձագանգէր:

- ▶ Presentation and discussion in English of Hrayr Anmahouni's and Dr. Marc Nichanian's works among others, *Mourning Philology*
- ▶ Recasting previous Program segments in English

Mourning Philology draws on Varuzhan and his work to present a history of the national imagination, which is also a history of national philology, as a reaction to the two main philological inventions of the nineteenth century: mythological religion and the native. In its first part, the book thus gives an account of the successive stages of orientalist philology. The last episode in this story of national emergence took place in 1914 in Constantinople, when the literary journal *Mehyan* gathered around Varuzhan the great names to come of Armenian literature in the diaspora.

“Pagan life seduces me a little more with each passing day. If it were possible today, I would change my religion and would joyfully embrace poetic paganism,” wrote the Armenian poet Daniel Varuzhan in 1908. During the seven years that remained in his life, he wrote largely in this “pagan” vein. If it was an artistic endeavor, why then should art be defined in reference to religion? And which religion precisely? Was Varuzhan echoing Schelling’s *Philosophy of Art*?



- ▶ Առիթ՝ մասնակցութեամբ ներկաներուչ որոնք գործեր կամ/և նիւթեր ընտրած են նախընթաց միջոցառումներէն, իրենց գեղարուեստական կամ քննական տպատրութիւնները ներկայացնելու
- ▶ Եզրափակիչ դիտարկումներ

Փոխգործոն հրապարակին ընթացքինչ ներկայ մասնակիցները, որոնք երկու շաբթուան ծրագրէն գործեր կամ թեմաներ ընտրած են, պիտի հրաւիրուին իրենց գեղարուեստական եւ քննական արձագանգները ներկայացնելու: Բանահրապարակին բովանդակութիւնը պիտի առաջնորդուի ներկայ անդամներուն, գրողներուն եւ արուեստագէտներուն կողմէ, որոնք կ'ուզեն իրենց գործերն ու գաղափարները *The Art of Diaspora / Բննադատական գործունի կողմէ* բարձրացուած որեւէ նիւթի հետ խօսակցութեան մէջ գետեղել: Այս կամար, յանպատրաստից ներկայացումներուն նպատակն է գրողներուն եւ արուեստագէտներուն առիթ մը տալ իրենց աւարտուն կամ ընթացքի մէջ եղող գործերը ներկայացնելու եւ քննելու եւ ստեղծելու ներգործոն միջոց մը որ կը քաջալերէ հայերէնով քննական զրոյցը:

- ▶ Opportunity for audience participation to provide artistic or critical response to selected works and/or events from the preceding days
- ▶ Concluding remarks

During the Interactive Forum, audience participants, who have selected works and/or topics from the two-week program, will be invited to present their artistic or critical responses. The content of the Forum will be guided by community members, writers, and artists who wish to place their work and ideas in conversation with any of the questions raised by *The Art of Diaspora / Բննադատական գործունի*. These voluntary, impromptu presentations are meant to give writers and artists an opportunity to present and discuss their finished or in-progress works and to create an interactive space that fosters critical discourse in Armenian.





Hrayr Anmahouni (Eulmessekiian) is a graduate of Nichan Palandjian Djemaran in Beirut, Lebanon. He attended the Academie Libanaise des Beaux Arts for two years, and moved to San Francisco in 1984 where he received his B.F.A. and M.F.A. from the San Francisco Art Institute. His works have been exhibited, screened or broadcast in the San Francisco Bay Area, Los Angeles, New York, Yerevan, Art Dubai, Sharjah Biennial March Meeting, and Pratt Manhattan Gallery. He is the guest editor of *ArteEast Quarterly*, 2014 Spring issue. He was the subject of a featured interview by Marc Nichanian, and his work was reviewed by Anahid Kassabian, both published in *Gam Review 6*. A founding member of the San Francisco Armenian Film Festival, he serves on its curatorial team. He currently lives in Los Angeles.

ՀՐԱՅՐ ԱՆՄԱՀՈՒՆԻ (Էօլմեսեկեան) Պէյրոսի Նշան Փալանճեան ճեմարանի շրջանաւարտ է: Ան երկու տարի յաճախած է Գեղեցիկ Արուեստներու Լիբանանեան Ակադեմիան՝ ապա տեղափոխուած է Սան Ֆրանսիսկո 1984ին, ուր Սան Ֆրանսիսկոյի Արուեստի Կաճառէն (SFIA) ստացած է Գեղարուեստի պատկաւաւոր եւ մագիստրոս վկայականները: Իր գործերը ցուցադրուած կան պիտուած են Սան Ֆրանսիսկոյի Ծովածոցը, Լոս Անճելըս, Նիւ Եորք, Երեւան, Արթ Տուպայի, Շարժայի երկամեայ մարտ հանդիպումի եւ Փրաթ Մանհատթըն արուեստասրահին մէջ: Ան հիւր-խմբագիրն է *ArteEast* քառամսեակի 2014 գարուն թիւին: Ան գլխաւոր նիւթն էր Մարկ Նշանեանի հետ հարցազրոյցի մը եւ իր գործերը գրախօսուած են Անահիտ Քասապեանի կողմէ, երկուքն ալ հրատարակուած *ԿԱՄ* թիւ 6ի մէջ: Սան Ֆրանսիսկոյի հայ ֆիլմի փառատօնի հիմնադիր անդամներէն մին, ան անոր վարիչ կազմին վրան է: Ներկայիս Լոս Անճելըս կը բնակի:



Marc Nichanian is a graduate of the University of Stasbourg and the École Nationale des Langues Orientales Vivantes. He was Professor of Armenian Studies at Columbia University from 1996 to 2007 and is currently Visiting Professor at Sabanci University, Istanbul, in the Department of Cultural Studies. He has published six volumes of *GAM*, an Armenian language journal of literary analysis and translation; an extensive bibliography of and three volumes of criticism on Hagop Oshagan; a volume on the history of Armenian language, *Ages et usages de la langue armenienne* (1988); and French translations from Armenian (Khrakhouni) and English (Vahakn Dadrian). His publications in English include *Mourning Philology*, *The Historiographic Perversion* and *Writers of Disaster*. Recently, his Armenian language works have been published in Yerevan, the latest being *Պարկեր, Պարոս, Պարմութիւն*. փիլիսոփայական բարեկամութիւն մը (2015).

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ շրջանաւարտ է Սթրասպուրկի համալսարանէն եւ École Nationale des Langues Orientales Vivantes-ն (Ապրող Արեւելեան լեզուներու ազգային ուսումնարան): Ան Հայկական ուսումնասիրութեանց դասախօս էր Գոլումպիա համալսարանը 1996էն 2007 եւ այցելու դասախօս եղած է Պէյրոսի Հայկազեան համալսարանը ինչպէս նաեւ Իսթանպուլի անգլիախօս Սապանճի համալսարանին Մշակութային ուսումնասիրութիւններու բաժնէն ներս: Ան հրատարակած է *ԿԱՄ*ի վեց հատորներ, գրական վերլուծութեան եւ թարգմանութեան հայերէն պարբերաբերք մը՝ իսկ համապարբակ մատենագիտութիւն մը եւ երեք բնական հատորներ Յակոբ Օշականի մասին՝ իսկ հայ լեզուի պատմութեան վրայ, *Ages et usages de la langue Armenienne* եւ ֆրանսերէնի թարգմանութիւններ հայերէնէ (Խրախունի) եւ անգլերէնէ (Վահագն Տատրեան): Անգլերէնով իր հրատարակութիւններէն են *Mourning Philology*, *The Historiographic Perversion* եւ *Writers of the Disaster*: Վերջերս իր հայերէնով գործերը հրատարակուած են Երեւան, վերջինը ըլլալով *Պարկեր՝ պարոսն զպարմութիւն 1*. փիլիսոփայական բարեկամութիւն մը:



MYRNA DOUZHIAN holds a Ph.D. in Comparative Literature from the University of California, Los Angeles. Her work examining the politics of twentieth-century Armenian literary production has been published in a volume on Armenian Philology in the Modern Era. Her current research focuses on critical approaches to the study of world literature and post-Soviet literary culture. Dr. Douzjian has taught literature, composition, literary theory, and film at UCLA, Temple University, and California State University, Fresno. She is currently teaching courses on twentieth-century Armenian and Russian literatures at UC Berkeley.

ՄԻՐՆԱ ՏՈՒԶՆԵԱՆ դոկտորական ունի Բաղդատական գրականության մեջ Լոս Անճելլիսի Գալիֆորնիոյ համալսարանէն: Քսաներորդ դարու հայ գրականութեան արտադրութեան՝ քաղաքական համոզմունքները քննող իր գործը հրատարակուած է Արդի շրջանի հայ փիլիսոփայութեան նուիրուած հատորի մը մէջ: Իր ներկայի հետազոտութիւնը կեդրոնացած է համաշխարհային գրականութեան եւ յետ-խորհրդային գրական մշակոյթի սերտողութեան քննական մօտեցումներուն վրայ: Գր. Տուզնեան գրականութիւնը շարադրութիւն (composition), գրական տեսութիւն եւ ֆիլմ դասաւանդած է Լ. Ա.ի Գալիֆորնիոյ համալսարանին, Թեմիլ համալսարանին, եւ Ֆրեզնոյի Գալիֆորնիոյ նահանգային համալսարանին մէջ: Ներկայիս հայ եւ ռուս գրականութիւններու մասին դասընթացք կու տայ Պրըքլիի Գալիֆորնիոյ համալսարանին մէջ:



KAREN JALLATYAN is a Ph.D. student of Comparative Literature at the University of California, Irvine. His dissertation looks at the works of four contemporary Diaspora Armenian writers and filmmakers, analyzing how they critically re-imagine Armenianness. At the heart of Karen's research is the power of art and thinking in facilitating social and political transformation.

ԿԱՐԷՆ ԶԱԼԼԱԹԵԱՆ Ըրվայնի Գալիֆորնիոյ համալսարանէն Բաղդատական գրականութեան դոկտորական ուսանող է: Իր թեզը կը հետեւի ժամանակակից չորս սփիւռքահայ գրողներու եւ ֆիլմարտադրիչներու գործերուն, վերլուծելով թէ անոնք ինչպէս քննականօրէն կը վերապատկերեն հայեցիութիւնը: Կարենի ուսումնասիրութեան կորիզն է արուեստի եւ իմացականութեան ոյժը ընկերային եւ քաղաքական կերպափոխումներ իրականացնելու:



TALAR CHAHINIAN holds a Ph.D. in Comparative Literature from UCLA and lectures in the Department of Comparative World Literature at California State University, Long Beach. Her research and teaching interests include Modern Armenian Literature, Transnational Studies, Politics and Aesthetics, Translation, and Digital Humanities. She contributes regularly to the online journal, *Critics' Forum*, and is the Assistant Editor of the *Armenian Review*.

ԹԱԼԱՐ ՇԱՀԻՆԵԱՆ սորբորական ունի Բաղդատական գրականութեան մէջ UCLA-ն եւ California State University, Long Beach-ի մէջ Համաշխարհային բաղդատական գրականութեան բաժանմունքէն ներս կը դասաւանդէ: Իր ուսումնասիրական եւ դասախօսական հետաքրքրութիւններէն են արդի հայ գրականութիւն, անդրազգային ուսումնասիրութիւններ, քաղաքականութիւն եւ գեղարուեստ, թարգմանութիւն եւ թուային մարդկայնութիւն՝ Ան կանոնաւորապէս կ'աշխատակցի առցանց պարբերական *Critics' Forum* եւ *Armenian Review* օգնական խմբագիրն է:

ARNO YERETZIAN received his B.A. in Film Production from the University of California, Santa Cruz. He is the producer and one of the directors of the award-winning experimental documentary, *Planet Zorthian*. Currently he manages Abril Bookstore and Roslin Art Gallery, organizing countless presentations and exhibits.

ԱՐՆՕ ԵՐԷՅԵԱՆ արուեստի պսակատր տիտղոսը ստացած է ֆիլմի արտադրութեան մէջ Սանթա Բրուզի Գալիֆորնիոյ համալսարանէն: Ան արտադրիչն ու բեմադրիչներէն մին է մրցանակատր փորձառական փաստագրական *Planet Zorthian* (Զօրթեան մոլորակ) ֆիլմին: Ներկայիս ան կը վարէ Ապրիլ Գրատունն ու Ռոսլին Արուեստասրահը՝ անթիւ ներկայացումներ ու ցուցադրութիւններ կազմակերպելով:

2016

The Art of Diaspora
ըննադարակալան

ORGANIZING COMMITTEE • ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԽՈՒՄԲ

Karen Jallatyan - Program Director

Myrna Douzjian - Event Curator

Hrayr Anmahouni - Artistic Director

Arno Yeretzian - Project Manager

Կարեն Ջալաթյան - Ծրագրի Տնօրէն

Միրնա Տուզճեան - Միջոցառման վարիչ

Հրայր Անմահունի - Գեղարուեստական ղեկավար

Արնօ Երէցեան - Ծրագրի կազմակերպիչ

THANKS • ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Yervant Kotchounian - translation and editing

Sanan Douzdjian, Hagop Gulludjian

Երուանդ Գոչունեան - Թարգմանութիւն եւ խմբագրութիւն

Սանան Տուզճեան, Յակոբ Կիլիւնեան

SPONSORS • ՀՈՎԱՆԱԻՈՐՆԵՐ

Hera Creative LLC

Gemini Designs

Houro's Gourmet Creations



CALOUSTE GULBENKIAN
FOUNDATION
ARMENIAN COMMUNITIES

Sponsored by The Calouste Gulbeknian Foundation
Հովանատրող՝ Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն

ABRIL BOOKSTORE
ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒԼ



Roslin Art Gallery

415 E. Broadway Suite 100-102, Glendale, CA 91205
(818) 243-4112 (818) 241-0611 noor@abrilbooks.com
www.abrilbooks.com/news/the-art-of-diaspora